ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.Անուն Ազգանուն – Արսեն Թորոսյան, Լենա Նանուշյան

2. Զբաղեցրած պաշտոնը – Առողջապահության նախարար, Առողջապահության նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները – Ամստերդամ, Նիդեռլանդների Թագավորություն, 2018թ. հուլիսի 22-24

4. Հրավիրող կողմը – ԱՀԿ

5. Գործուղման նպատակը

2018թ. հուլիսի 23-ին Ամստերդամում (Նիդեռլանդներ) կայացավ «Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ վարակի և ուղեկցող հիվանդությունների դեմ պայքարին ուղղված քաղաքականության վերաբերյալ նախարարական երկխոսություն» թեմայով միջազգային նախարարական համաժողով, որը կազմակերպվել էր Նիդեռլանդների Թագավորության, Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հարցերի Ծրագրի աջակցությամբ:

«ՁԻԱՀ 2018»-ն աշխարհի ամենատարածված առողջապահական խնդիրներից մեկին վերաբերող խոշորագույն համաժողովներից է: Համաժողովի նպատակն էր ուժեղացնել առողջապահական քաղաքականությունն ու երկրների համատեղ ծրագրերը, որոնք ապահովում են համաճարակներին ուղղված արդյունավետ ու արագ արձագանք: Համաժողովի այս տարվա կարգախոսն էր՝ «Հաղթահարելով արգելքները՝ կառուցել կամուրջներ»:

6. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում երկրների առողջապահության նախարարները քննարկեցին սոցիալական որոշիչներին, հավասարությանը, մարդու

իրավունքներին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանը, արձագանքմանը, կայուն ֆինանսավորմանն ուղղված կարևոր հարցեր:

7.Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

«Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում ՄԻԱՎ վարակի և ուղեկցող հիվանդությունների դեմ պայքարին ուղղված քաղաքականության վերաբերյալ նախարարական երկխոսություն» թեմայով միջազգային նախարարական համաժողովին մասնակցում էին ԱՀԿ եվրոպական տարածաշրջանի անդամ-պետությունների նախարարներ, ԱՀԿ և ՄԱԿ այլ կառույցների բարձրաստիճան պաշտոնյաներ, հասարակական կազմակերպությունների ղեկավարներ:

Համաժողովի պլենար նիստի ընթացքում ելույթով հանդես եկավ Առողջապահության նախարար Արսեն Թորոսյանը: Մասնավորապես, խոսվեց Հայաստանում մորից երեխային փոխանցվող ՄԻԱՎ վարակի կանխարգելման միջոցառումների մասին: Նշվեց նաև, որ Հայաստանն այսօր հնարավորություն ունի կիսելու ձեռքբերումներն ու մարտահրավերներին դիմակայելու դրական փորձը: Կարևորելով կատարված աշխատանքը՝ Հայաստանը վերահաստատեց ԱՀԿ և անդամ երկրների հետ համագործակցությամբ ՄԻԱՎ-ի դեմ պայքարելու և մինչև 2030թ. ՁԻԱՀ-ի համաճարակը վերացնելու իր հանձնառությունը:

ՀՀ առողջապահության նախարարը և նախարարի տեղակալը համաժողովի ընթացքում երկկողմ հանդիպումներ ունեցան Վրաստանի առողջապահության, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի, Ռուսաստանի Դաշնության առողջապահության նախարարի տեղակալի, ինչպես նաև ՄԻԱՎ/ՁԻԱՀ ոլորտում գործող միջազգային կառույցների ղեկավարների հետ: Քննարկվել են հետագա համագործակցության հարցերը:

Հանդիպում տեղի ունեցավ նաև Հայ բժշկական միջազգային կոմիտեի (AMIC) ներկայացուցիչների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին AMIC-ի հովանու ներքո գտնվող սփյուռքահայ բժշկական կազմակերպությունների կողմից Հայաստանի առողջապահության համակարգին նպաստելուն ուղղված հարցեր:

8. Հանդիպման կամ նիստերի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Համաժողովի ընթացքում Վրաստանի առողջապահության նախարարը ՀՀ առողջապահության նախարարին աշխատանքային այցով հրավիրեց Վրաստան: Այցը թույլ կտա զարգացնել երկկողմ փոխշահավետ համագործակցությունը:

ՌԴ առողջապահության նախարարի տեղակալի հետ քննարկվեցին 2018թ. վերջին եռամսյակում Ռուսաստանի Դաշնությունում կայանալիք հերթական հայ-ռուսական առողջապահական ֆորումին առնչվող կազմակերպչական հարցեր:

Համաժողովի շրջանակներում ԱՀԿ հետ քննարկվեցին ՄԻԱՎ վարակի ուղղությամբ համագործակցությունը սերտացնելու հետագա աշխատանքները, ինչպես նաև, ընդհանուր առմամբ, ԱՀԿ հետ ստորագրված երկամյա համագործակցության համաձայնագրի կիրարկման ուղղությունները:

9. Առաջարկությունները

Առաջարկվել է խորացնել ԱՀԿ Եվրոպական տարածաշրջանային գրասենյակի հետ ՄԻԱՎ/ՁԻԱՀ ոլորտում համագործակցությունը, զարգացնել երկկողմ գործակցությունը եվրոպական երկրների հետ՝ հաշվի առնելով նաև հարևան երկրների և փոխադարձ միգրացիոն փորձ ունեցող երկրների հետ առկա համագործակցությունը:

10. Գործուղվողները

Արսեն Թորոսյան, Լենա Նանուշյան

11. Ստորագրությունը, ամսաթիվը

2018թ. հուլիսի 25